**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**

**ՈՐՈՇՈՒՄ**

2023թ. հուլիսի 7-ին, N 256-Ա ք.Աշտարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՓԱՐՊԻԻ Ղ. ՓԱՐՊԵՑՈՒ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Փարպիի Ղ. Փարպեցու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Բավական Հարությունյանի 2023 թվականի հուլիսի 3-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Փարպիի Ղ. Փարպեցու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Բավական Հարությունյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2022-2023 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2023 թվականի հուլիսի 10-ից օգոստոսի 11-ը ներառյալ:
2. Բավական Հարությունյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Փարպիի Ղ. Փարպեցու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Փարպիի Ղ. Փարպեցու անվան միջնակարգ դպրոց»

պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Վարդան Պետրոսյանի վրա:

3. Բավական Հարությունյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի օգոստոսի 14-ից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 7/7/2023 17:57:23 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ